AZAL օդանավի կործանումն Ի. Ալիևի ռուսաստանյան քաղաքականության համատեքստում

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 05.01.2025 թ.[1]

25.12.2024 թ. ադրբեջանական *AZAL* ավիաընկերության Embraer E190 ինքնաթիռի կործանման պատմությունը ցույց տվեց, որ ՌԴ-ի և Ադրբեջանի հարաբերությունները, ի հեճուկս նրանց հնչեցրած հայտարարությունների, բարդ շրջան են ապրում: Միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ նմանատիպ դեպքերում ռազմավարական գործընկերներն ու դաշնակիցները փորձում են հնարավորինս արագ հարթել միջադեպը, հատկապես, եթե դա մարդկային գործոնների կամ ֆորսմաժորային իրավիճակի հետևանք է: Առհասարակ, նմանատիպ խնդիրները կառուցողական կերպով և առանց քաղաքական հետևանքների լուծելու համար պարտադիր չէ, որպեսզի կողմերը սերտ հարաբերություններ ունենան:

Այս առումով հատկանշական է 04.10.2001 թ. Թել Ավիվից Սև ծովի վրայով Նովոսիբիրսկ թռչող «Սիբիր» ավիաընկերության Տու-154Մ խոցված ինքնաթիռի օրինակը: Ինքնաթիռը սխալմամբ խոցվել է 5V28 հրթիռով Ուկրաինայի ՀՕՊ ուժերի S-200V համալիրից, որոնք այդ պահին վարժանքներ էին անցկացնում Ղրիմի հրաձգարանում: Ռուս-ուկրաինա-իսրայելական համատեղ հանձնաժողովի հետաքննության արդյունքում Կիևն ընդունել է իր մեղքը, ներողություն խնդրել կողմերից, վճարել դրամական փոխհատուցում և պաշտոնանկ արել մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում՝ պաշտպանության նախարարին: Այսպիսով, միջադեպը հարթվել է:

Ադրբեջանական ինքնաթիռի կործանման պարագայում իրավիճակը որոշակիորեն այլ բնույթ է ստացել՝ քաղաքական մեծ աղմուկի նախանշաններով: Եվ երկու կողմերն էլ (ՌԴ և ԱդրՀ) հավասարապես նպաստեցին իրադարձությունների նման ընթացքին: Բաքուն չցանկացավ հաշվի առնել այն փաստը, որ ողբերգական միջադեպի պահին Հյուսիսային Կովկասի տարածաշրջանը ենթարկվել էր ուկրաինական ԶՈՒ-ի օդային հարձակման, իսկ ՌԴ Հարավային ռազմական օկրուգի ՀՕՊ ուժերը գործում էին օպերատիվ ռեժիմում: Ավելին, չսպասելով հետաքննության պաշտոնական ավարտին և աղետի հանգամանքների վերջնական պարզաբանմանը, Բաքվի իշխանամետ լրատվամիջոցները մեղադրանքներ են առաջադրել Մոսկվային՝ դրանով իսկ կտրուկ բարձրացնելով հակառուսական տրամադրությունների մակարդակը ադրբեջանական հանրության շրջանում: *«Պուտինի անհապաղ ներողությունը»* դարձել է հանրապետության հասարակական-քաղաքական տրամադրությունների հիմնական

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 30.12.2024 թ.:

պահանջը՝ տրամադրություններ, որոնք ԱդրՀ-ում ձևավորվում են իշխանության միջանցքներում:

ՌԴ-ն, իր հերթին, նույնպես մի շարք գործողություններով առարկայորեն նպաստել էր քաղաքական աղմուկի սրմանը: Դա ներառում էր և Ռամզան Կադիրովի կողմից իր եղբորորդու՝ Չեչնիայի Անվտանգության խորհրդի քարտուղար Խամզաթ Կադիրովի պարգևատրումը «Չեչնիայի Հանրապետությանը մատուցած ծառայությունների համար» մեդալով՝ «*Դեկտեմբերի 25-ին Գրոզնու վրա ուկրաինական զինված ուժերի օդային հարձակման հաջող եր մման*» կապակցությամբ: Եվ Եկատերինբուրգում՝ ԱդրՀ գլխավոր հյուպատոսության հարևանությամբ, ի հիշատակ ավիավթարի զոհերի տարերայնորեն կառուցված հուշակոթողի ապամոնտաժման մասին մեծ աղմուկ հանած պատմությունը:

Սակայն, ըստ ադրբեջանցիների, ամենաբացասական հետքը թողել են այն հաղորդումները, որ աղետից անմիջապես հետո ռուսական կողմը փորձել է հետաքննությունն ուղղորդել դեպի «*բացահայտ կեղծ ճանապարհ*»: Ադրբեջանական և ղազախական մի շարք աղբյուրների համաձայն՝ ՌԴ ԱԳՆ Երրորդ և Չորրորդ գերատեսչությունների աշխատակիցները՝ ռուսական հատուկ ծառայությունների ներկայացուցիչների հետ միասին, փորձել են գաղտնի բանակցություններ վարել Բաքվի և Աստանայի հետ՝ *AZAL* ինքնաթիռի կործանման խնդրում հրթիռային հարձակման փաստը բացառող ինչ-որ մի վարկած մշակելու համար: Ավելի ուշ՝ ՌԴ ԱԳՆ-ն հերքեց այս տեղեկությունը, սակայն այդ «*սադրանքի*» մեջ մեղադրեց ոչ թե Բաքվին ու Աստանային, այլ՝ «*արևմտյան կենտրոններին*»:

Ըստ ամենայնի, հենց այն բանից հետո, երբ ադրբեջանական կողմը վերոհիշյալ մասնավոր շփումների ժամանակ կտրականապես մերժեց «*համաձայնության գալու*» հնարավորությունը, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը զանգահարեց իր ադրբեջանցի գործընկերոջը: 28.12.2024 թ. Իլհամ Ալիևի հետ հեռախոսազրույցի ընթացքում Վ. Պուտինը հաստատել է ռուսական օդային տարածքում ինքնաթիռի խոցման վարկածը և ներողություն խնդրել իր ադրբեջանցի գործընկերոջից: Մինչդեռ, համատեղ հանձնաժողովը դեռ պաշտոնական հայտարարություն չէր արել, ինչը վկայում է, որ ՌԴ ղեկավարը շտապում էր լիցքաթափել ռուս-ադրբեջանական դաշնակցային հարաբերությունների համար սպառնալիք դարձած իրավիճակը:

Սակայն հարկ է նշել, որ Ռուսաստանի առաջին դեմքի զանգը չի հարթել միջադեպը և դրա շուրջ հասունացող աղմուկը: 27.12.2024 թ. *AZAL*-ը, ղեկավարվելով Ադրբեջանի քաղաքացիական ավիացիայի պետական գործակալության որոշմամբ, անորոշ ժամկետով չեղարկեց թռիչքները դեպի Ռուսաստանի 10 քաղաք: Եթե այս միջոցառումը կարելի է որակել որպես տեխնիկական անհրաժեշտություն՝ կապված Ռուսաստանի

օդային տարածքով թռիչքների անվտանգության հետագա գնահատման հետ, ապա Բաքվի կողմից ընդունված մեկ այլ որոշում բացառապես քաղաքական բնույթ է կրում:

28.12.2024 թ. Ադրբեջանի ԱԳՆ-ն հայտարարել է ՌԴ քաղաքացիների՝ ԱդրՀ-ում գտնվելու տևողության կանոնների վերանայման և խստացման մասին: Ըստ ԱդրՀ ԱԳՆ մամուլի քարտուղար Այհան Հաջիզադեի, Ադրբեջանի իշխանությունները, ընդունելով այս որոշումը, ելնում են «*ժամանակավոր կացության և միգրացիայի հարցերում հավասարության և փոխադարձության սկզբունքներից, ինչպես որ արտաքին քաղաքականության բոլոր հարցերում*»: Հաջիզադեն, ըստ երևույթին, ակնարկում էր ՌԴ ԱԳՆ-ի երկու օր առաջվա այն հայտարարությունը, որ 01.01.2025 թ.-ից «*...առանց վիզայի Ռուսաստան ժամանած օտարերկրացիների երկրում ժամանակավոր մնալու ժամկետը մեկ օրացուցային տարվա ընթացքում չի կարող գերազանցել ընդհանուր առմամբ 90 օրը*»: Այսպիսով, Ադրբեջանի ԱԳՆ-ն, խստացնելով կանոնները հատուկ ռուսաստանցիների համար, վկայակոչում է «*հավասարության*» սկզբունքը, թեև Մոսկվան իր կանոնները փոխել է ՌԴ առանց վիզայի բոլոր մուտքերի համար՝ անկախ նրանց քաղաքացիությունից: Ինչպես երևում է այս տեղեկատվությունից, «*հավասարության*» մասին խոսք լինել չի կարող: Հատկանշական է նաև Հաջիզադեի «*քաղաքական հարցերում հավասարության և փոխադարձության*» մասին հիշատակումը, ինչը, հավանաբար, վկայում է Բաքվի մտադրությունների մասին՝ ավելի կոշտացնելու իր դիրքորոշումը ռուս-ադրբեջանական օրակարգի բազմաթիվ հարցերի վերաբերյալ:

AZAL ինքնաթիռի աղմկահարույց միջադեպի համապատկերում էլ ավելի նկատելի է դարձել Բաքվի նկատմամբ ռուսական քաղաքականության առանց այն էլ տեսանելի զգուշավորությունը: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե օդանավի հետ տեղի ունեցած ողբերգական միջադեպը Բաքվին հնարավորություն է տվել սրբագրելու հարաբերությունները Մոսկվայի հետ և գործելու՝ առանց հաշվի առնելու հետևանքները: Դրա մասին է վկայում նաև Ի. Ալիևի պահվածքը, ով սրում է իրավիճակը մինչև այն սահման, որից այն կողմ տեսանելի են դառնում Ռուսաստանի հետ բացահայտ քաղաքական հակասության նշանները:

Նույնիսկ ՌԴ ղեկավարի ներողությունից հետո Ադրբեջանի նախագահը ոչ միայն չի ձգտել նվազեցնելու լարվածությունը, այլև խստացրել է իր հռետորաբանությունը. «*Սեփական մեղքն ընդունելն ու Ադրբեջանից ժամանակին ներողություն խնդրելն այն միջոցներն ու քայլերն էին, որոնք պետք էր ձեռնարկել: Ցավոք սրտի, առաջին երեք օրերին Ռուսաստանից ոչինչ չլսեցինք, բացի անհեթեթ վարկածներից*»: Դժվար է ասվածը չհամարել հարձակում անձամբ Վ. Պուտինի դեմ, թեև՝ հաշվի առնելով «*երկու ղեկավարների միջև երկար տարիների համատեղ աշխատանքի և բարեկամության ընթացքում ձևավորված փոխըմբռնման բարձր աստիճանը*», սպասելի էր, որ աղետի

հետ կապված միջադեպը կլուծվեր նրանց կողմից մասնավոր ձևաչափով և առավել ևս՝ առանց հրապարակային մեղադրանքների:

Սակայն Ի. Ալիևը փորձում է թույլ չտալ, որ թեման առնվազն «*սառչի*», և այս նախաձեռնության մեջ, դատելով ադրբեջանական ԶԼՄ-ների հրապարակումներից, նա ակտիվորեն առաջնորդվում է Անկարայի խորհուրդներով: Այսպես, ավիավթարին հաջորդող օրերին Ադրբեջանի ղեկավարը տեղի ունեցածը քննարկել է իր թուրք գործընկերոջ հետ, մինչդեռ ԱդրՀ ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովը մշտական կապի մեջ էր Հաքան Ֆիդանի հետ:

Արժե նաև հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Ալիևի վերը նշված հայտարարությունից հետո Պուտինը երկրորդ անգամ զանգահարել է Ի. Ալիևին 29.12.2024-ին, և, հավանաբար, այս անգամ հեռախոսազրույցը տեղի է ունեցել մի փոքր այլ տոնայնությամբ:

Կարող են լինել բավարար պատճառներ, որոնք Ի. Ալիևին դրդեցին ընդգծելու *AZAL* ինքնաթիռի ողբերգական միջադեպը: Նախ, կարելի է ենթադրել, որ աղմուկը «*բորբոքելով*»՝ Ի. Ալիևն ընդլայնում է Մոսկվայի հետ «սակարկությունների» շրջանակը՝ ձգտելով լրացուցիչ բոնուսներ ստանալ ռուս-ադրբեջանական քաղաքական և տնտեսական հարաբերությունների ընդհանուր համատեքստում: Հնարավոր է նաև, որ Ի. Ալիևն ավելի ու ավելի է դժգոհում «*Պուտինի ավտորիտարիզմի*» արբանյակի իր համբավից: Այս առումով, ըստ Ի. Ալիևի, ռուս-ադրբեջանական աղմկահարույց միջադեպը կարող է թուլացնել Ադրբեջանի հասցեին Արևմուտքի քննադատությունը, որն ընդգծում է հանրապետությունում ժողովրդավարության հետ կապված իրավիճակի վատթարացումը և Բաքվի գործողությունները՝ օրինականացնելու ռուսական եկամուտը՝ շրջանցելով արևմտյան պատժամիջոցները:

Այս առումով Ալիևը, ըստ երևույթին, մտահոգվելու պատճառ ունի: Բաքվի վարկանիշը, իրոք, մեծապես տուժել է այն լուրերից հետո, որ Ռուսաստանն ու Ադրբեջանը փորձում են «*Ուկրաինային պարտադրել*» գազի տարանցման նոր պայմանագիր, ըստ որի ռուսական գազը Եվրոպա կուղարկվի ադրբեջանական «*պիտակավորմամբ*»: Հենց այս հումքի վաճառքի սխեման է քննարկվել Պուտինի և Ալիևի՝ 2024 թ. ապրիլին Մոսկվայում և օգոստոսին Բաքվում կայացած հանդիպումների ժամանակ: Մշակվող ծրագիրը Ռուսաստանին թույլ կտա, չնայած մարտական գործողություններին, շարունակել Ուկրաինայի տարածքով իր գազի արտահանումն Արևմուտք, իսկ Ադրբեջանին հնարավորություն կտա «*ոչնչից*» փող աշխատել: Սակայն, ինչպես հայտնի է, Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին 20.12.2024 թ. հայտարարել է, որ բացառում է նման հնարավորությունը՝ դրանով իսկ վտանգելով ռուս-ադրբեջանական համագործակցության կարևոր բաղադրիչը: Ուկրաինայի ղեկավարի փաստարկները շատ անբարենպաստ լույսի ներքո են դնում Ադրբեջանին՝ որպես

ռուսական *«գազային արկածախնդրության մասնակից»*, որը նույնպես ցանկանում էր օգուտ քաղել «*ուկրաինական արյունից և արժանապատվությունից*»:

Գազը «*վերապիտակավորելու*» ծրագրերն ի չիք են դարձել՝ դրանով իսկ կրճատելով Բաքվի շահերը ՌԴ հետ գործընկերային հարաբերությունների ոլորտում: Դեռ պարզ չէ, թե Ռուսաստանը, բացի արդեն կորցրած «*գազի փողերից*», ուրիշ էլ ինչ կարող է առաջարկել Ադրբեջանին՝ փոխհատուցելու համար Մոսկվայի հետ «*բարեկամության*» վարկանիշային և քաղաքական ծախսերը: Այս համատեքստում հարկ է հիշել ԱդրՀ երբեմնի խոստացված շահավետ մասնակցությունը ՌԴ և ԻԻՀ նախաձեռնած «Հյուսիս–Հարավ» անդրմայրցամաքային լոգիստիկ նախագծին: Սակայն այս ծրագիրը դեռևս նախագծման փուլում է՝ տեխնիկական, ֆինանսական և քաղաքական չլուծված խնդիրների պատճառով: Բացի այդ, Մերձավոր Արևելքում տեղի ունեցած վերջին իրադարձություններից հետո ռուս-իրանական լոգիստիկ նախագիծը հայտնվել է սպառնալիքի տակ: Սիրիական գործոնը փոխել է աշխարհաքաղաքական իրողությունները Եվրոպայից մինչև Աֆրիկա և Կենտրոնական Ասիա տարածության մեջ: «*Դիմադրության առանցքի*» (կամ «*շիական կամարի*») փաստացի փլուզումն ու Թուրքիայի և Իսրայելի դերն այս տարածաշրջանի վերակազմավորման գործընթացներում բարդացնում են Թեհրանի և Մոսկվայի խնդիրները: Իսրայելն ու ԱՄՆ-ն սկսել են ավելի հաճախ հնչեցնել Իրանի վրա հարձակվելու սպառնալիքները, իսկ Բ. Ասադի վարչակարգի տապալումից և Դ. Թրամփի մոտալուտ երդմնակալությունից հետո նման ծրագրի իրականացման հավանականությունն զգալիորեն կաճի: Եթե նման զարգացումներ տեղի ունենան, ապա ոչ միայն կասկածի տակ կդրվեն ռուս-իրանական նախագծին Ադրբեջանի շահավետ ինտեգրման հեռանկարները, այլև ինքը՝ Բաքուն կարող է հայտնվել հակահիրանական մեծ արշավի «*մուրճի*» և «*զնդանի*» արանքում:

Թերևս դա է պատճառը, որ Ի. Ալիևի վարքագծում նկատելի են Իրանի դաշնակից Ռուսաստանի հետ սերտ համագործակցությունից հեռանալու նշաններ, որոնցից մեկը խոցված ինքնաթիռի հետ կապված աղմուկն էր, որ հրահրում էր Բաքուն: Հարկ է ընդգծել, որ Ալիևի հղած ազդակները Արևմուտքին տեղի են ունենում «*ռազմավարական դաշինքի մասին*» ռուս-իրանական համաձայնագրի ստորագրման նախաշեմին: Ի. Ալիևը չի կարող հաշվի չառնել, որ ակնկալվող աշխարհաքաղաքական գործարքի համատեքստում բազմապատիկ կմեծանա իր երկրի նշանակությունը Մոսկվայի և Թեհրանի համար, հետևաբար՝ կաճի նաև ՌԴ-ի և ԻԻՀ-ի ճնշումն Ադրբեջանի վրա՝ նպատակ ունենալով սահմանափակել Բաքվի՝ աշխարհաքաղաքական բևեռների միջև խուսանավելու հնարավորությունը: Ի. Ալիևը կցանկանար այս միտքը փոխանցել Արևմուտքին, ավելի կոնկրետ՝ Դոնալդ Թրամփին, ով դեռ չի ցանկանում կապ հաստատել նրա հետ, և ապահովել Ադրբեջանի անվտանգության իր երաշխիքները, եթե Բաքուն գնա Մոսկվայի և Թեհրանի հետ հարաբերությունները խզելու ճանապարհով:

Այսպիսով, տարածաշրջանում և աշխարհում կանխատեսվող լայնածավալ վերափոխումների նախաշեմին՝ կապված Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունների և ԱՄՆ նոր նախագահի երդմնակալության հետ, Ադրբեջանը, ըստ էության, ուղերձներ է հղում ռուս-իրանական ռազմավարական մերձեցման համատեքստում իր դիրքորոշման և դերի անորոշության մասին: Նա հասկացնում է, որ ի վիճակի է, եթե անհրաժեշտ համարվի, գնալ քաղաքական լարվածության ՌԴ-ի հետ՝ չնայած Վ. Պուտինի հետ երկար տարիների «*անձնական բարեկամությանը և փոխըմբռնմանը*», ինչպես նաև ՌԴ-ի հետ «*ռազմավարական դաշինքի մասին*» 22.02.2022 թ. պայմանագրին: